

«ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ի
արտահերթ ժողովի

ք. Երևան

13 մարտի 2019թ.

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նախագահ ընտրելու մասին
2. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վերահսկիչ հանձնաժողովի անդամներ ընտրելու մասին
3. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամներ ընտրելու մասին:

Ժողովի նախագահող ընտրվեց Գագիկ Գրիգորյանը, քարտուղար՝ Աննա Կարախանյանը: Ժողովի նախագահողը տեղեկացրեց, որ ժողովն իրավագոր է՝ ժողովին մասնակցում են կազմակերպության 151 անդամներից 86-ը:

Մինչև օրակարգի հարցերին անդրադառնալը, քննարկում ծավալվեց օրակարգում ընդգրկված՝ կազմակերպության կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունների անցկացման եղանակի շուրջ: Արդյունքում որոշվեց յուրաքանչյուր մարմնի ընտրությունների անցկացման եղանակին անդրադառնալ տվյալ հարցը քննարկելիս:

1. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նախագահ ընտրելու մասին

Ժողովի նախագահողը տեղեկացրեց, որ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նախագահ ընտրվելու համար առաջադրվել է մեկ թեկնածություն՝ Իգոր Մկրտումյանի թեկնածությունը: Այլ թեկնածություններ չառաջադրվեցին: Բաց քվեարկության արդյունքում Իգոր Մկրտումյանը միաձայն ընտրվեց «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նախագահ:

Որոշում՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նախագահ ընտրել Իգոր Մկրտումյանին:

2. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վերահսկիչ հանձնաժողովի անդամներ ընտրելու մասին

Ժողովի նախագահողը տեղեկացրեց, որ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վերահսկիչ հանձնաժողովի անդամներ ընտրվելու համար առաջադրվել են 5 թեկնածու՝ Արամ Սարգսյան, Գուրգեն Պետրոսյան, Աշոտ Հարությունյան, Քրիստինա Բաբաջանյան, Քրիստինա Գյոնջյան:

Այլ թեկնածություններ չառաջադրվեցին, իսկ Քրիստինա Գյոնջյանը հանեց իր թեկնածությունը՝ միաժամանակ համաձայնություն տալով առաջադրվել որպես կազմակերպության վարչության անդամի թեկնածու՝ առաջադրումը մինչ այդ կատարվել էր Գրիգորի Սաղյանի կողմից:

Բաց քվեարկության արդյունքում Արամ Սարգսյանը, Գուրգեն Պետրոսյանը, Աշոտ Հարությունյանը, Քրիստինա Բաբաջանյանը միաձայն ընտրվեցին կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:

Որոշում՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վերահսկիչ հանձնաժողովի անդամներ ընտրել Արամ Սարգսյանին, Գուրգեն Պետրոսյանին, Աշոտ Հարությունյանին, Քրիստինա Բաբաջանյանին:

3. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամներ ընտրելու մասին

Ժողովի նախագահողը տեղեկացրեց, որ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամներ ընտրվելու համար առաջադրվել են 22 թեկնածու (Ալբերտ Տոնեյան, Անդրանիկ Ալեքսանյան, Աննա Կարախանյան, Ավետիք Եսայան, Արամ Վերոյան, Արման Ներսիսյան, Արմեն Մուրադյան, Գագիկ Գրիգորյան, Գրիգորի Սադյան, Գևորգ Պողոսյան, Թոմաս Մազեջիան, Լիաննա Գալստյան, Կարեն Գասպարյան, Կարեն Երզնկանյան, Կոյա Հովհաննիսյան, Միսակ Խաչատրյան, Շուշան Դոյդոյան, Սամվել Բեկթաշյան, Սիրանուշ Վարդանյան, Վահան Հովսեփյան, Վլադիմիր Սահակյան, Քրիստինա Հակոբյան), սակայն Վլադիմիր Սահակյանը ինքնաբացարկ է հայտնել: Հաշվի առնելով, որ Քրիստինա Գյոնջյանն առաջադրվել է որպես վարչության անդամի թեկնածու տվյալ պահին առաջադրված թեկնածուների թիվը 22-ն է:

Կազմակերպության անդամների կողմից առաջադրվեցին ևս 4 թեկնածություն (Անդրանիկ Մինասյան, Առնակ Մելիքյան, Արման Խաչատրյան, Հովհաննես Ալեքսանյան): Նշված 4 անձինք տվեցին իրենց համաձայնությունն առաջադրվել որպես վարչության անդամի թեկնածու: Արդյունքում, կազմակերպության վարչության անդամների թեկնածուների թիվը դարձավ 26: Այլ թեկնածություններ չառաջադրվեցին:

Կազմակերպության վարչության անդամներ ընտրելու համար տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն: Նախապես ստեղծված հաշվիչ հանձնաժողովը (հանձնաժողովի կազմում ընդգրկված էին Մարտին Մինասյանը, Նարինե Դերձակյանը, Անի Դալլաքյանը, Վեսմիրա Հարությունյանը, Աննա Զաքևոսյանը) քվեաթերթիկների հաշվարկման գործընթացի ավարտից հետո հրապարակեց քվեարկության արդյունքները՝

1. Ալբերտ Տոնեյան 63 կողմ
2. Անդրանիկ Ալեքսանյան 66 կողմ
3. Անդրանիկ Մինասյան 33 կողմ
4. Աննա Կարախանյան 67 կողմ
5. Առնակ Մելիքյան 29 կողմ
6. Ավետիք Եսայան 27 կողմ
7. Արամ Վերոյան 62 կողմ
8. Արման Խաչատրյան 60 կողմ
9. Արման Ներսիսյան 68 կողմ
10. Արմեն Մուրադյան 46 կողմ
11. Գագիկ Գրիգորյան 52 կողմ

12. Գևորգ Պողոսյան 25 կողմ
13. Գրիգորի Սաղյան 62 կողմ
14. Թոմաս Մազեջիան 24 կողմ
15. Լիաննա Գալստյան 68 կողմ
16. Կարեն Գասպարյան 51 կողմ
17. Կարեն Երզնկանյան 19 կողմ
18. Կոլյա Հովհաննիսյան 63 կողմ
19. Հովհաննես Ալեքսանյան 26 կողմ
20. Միսակ Խաչատրյան 61 կողմ
21. Շուշան Դոյդոյան 9 կողմ
22. Սամվել Բեկթաշյան 13 կողմ
23. Սիրանուշ Վարդանյան 61 կողմ
24. Վահան Հովսեփյան 31 կողմ
25. Քրիստինա Գյունջյան 45 կողմ
26. Քրիստինա Հակոբյան 62 կողմ:

Անվավեր քվեաթերթիկներ չկան: Քվեարկությանը մասնակցել են կազմակերպության 86 անդամ:

Ժողովը ձայների 84 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ հաստատեց քվեարկության արդյունքները:

Հաշվի առնելով, որ կազմակերպության վարչության անդամ ընտրվելու համար անհրաժեշտ էր ստանալ 44 կողմ ձայն, ինչպես նաև այն հանգամանքը, որ Գագիկ Գրիգորյանը քվեարկության արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ինքնաբացարկ էր հայտնել (հրաժարվել էր դառնալ կազմակերպության վարչության անդամ)՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամներ ընտրվեցին Ալբերտ Տոնեյանը, Անդրանիկ Ալեքսանյանը, Աննա Կարախանյանը, Արամ Վերդյանը, Արման Խաչատրյանը, Արման Ներսիսյանը, Արմեն Մուրադյանը, Գրիգորի Սաղյանը, Լիաննա Գալստյանը, Կարեն Գասպարյանը, Կոլյա Հովհաննիսյանը, Միսակ Խաչատրյանը, Սիրանուշ Վարդանյանը, Քրիստինա Գյունջյանը, Քրիստինա Հակոբյանը:

Որոշում՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամներ ընտրել՝

- 1) Ալբերտ Տոնեյանին,
- 2) Անդրանիկ Ալեքսանյանին,
- 3) Աննա Կարախանյանին,
- 4) Արամ Վերդյանին,
- 5) Արման Խաչատրյանին,
- 6) Արման Ներսիսյանին,
- 7) Արմեն Մուրադյանին,
- 8) Գրիգորի Սաղյանին,
- 9) Լիաննա Գալստյանին,
- 10) Կարեն Գասպարյանին,
- 11) Կոլյա Հովհաննիսյանին,

- 12) Միսակ Խաչատրյանին,
- 13) Սիրանուշ Վարդանյանին,
- 14) Քրիստինա Գյոնջյանին,
- 15) Քրիստինա Հակոբյանին:

Ժողովի նախագահող՝



Գ. Գրիգորյան

Ժողովի քարտուղար՝



Ա. Կարախանյան